Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1395 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻՆ ԱՅԼ ՎԱՅՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼԻՍ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողին այլ վայր ծառայության գործուղելիս բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինության դեպքում դրամական փոխհատուցում տալու կարգն ու չափը:

2. Անհրաժեշտության դեպքում, պայմանավորված քննչական կոմիտեի ծառայողին իր բնակության վայրից 30 կմ և ավելի հեռավորությամբ վայրում ծառայության նշանակմամբ և բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինությամբ, նրան օրական վճարվում է դրամական փոխհատուցում բնակելի տարածության վարձակալության դիմաց՝ փաստացի վճարված գումարի չափով, բայց ոչ ավելի, քան՝

Բնակավայրի անվանումը	Ընտանիքի (երեխաները, ամուսինները, ծնողները, տատը և պապը) անդամների թիվը	
	մինչև 4 անդամ	4 և ավելի անդամ
Երևան քաղաքում	1500 (դրամ)	2250 (դրամ)
Այլ քաղաքներում	800 (դրամ)	1200 (դրամ)
Այլ բնակավայրերում	500 (դրամ)	750 (դրամ)

3. Քննչական կոմիտեի ծառայողը փոխհատուցում ստանալու համար զեկուցագիր է ներկայացնում քննչական կոմիտեի նախագահին: Զեկուցագրին կցվում է բնակարանի վարձակալության պայմանագրի պատճենը:

4. Քննչական կոմիտեի նախագահի հանձնարարությամբ զեկուցագիրը քննարկվում է քննչական կոմիտեի դեպարտամենտի ֆինանսաբյուջետային և հաշվապահական հաշվառման վարչությունում: Սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում քննչական կոմիտեի դեպարտամենտը որոշում է ընդունում դրամական փոխհատուցում տալու մասին, եթե դրանցում առկա չեն թերություններ: Փաստաթղթերում թերություն հայտնաբերելու դեպքում դրամական փոխհատուցում տալու մասին որոշումն ընդունվում է այն վերացնելուց և փաստաթղթերը ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Զեկուցագրի բավարարման դեպքում քննչական կոմիտեի ծառայողին փոխհատուցման գումարները վճարում է քննչական կոմիտեի դեպարտամետը՝ նախատեսված բյուջետային միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ